ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

N 01/01-753
«27» 06 2025

«Տրանզիտ պրո» ՍՊԸ-ի
տնօրեն Ա. Ասատրյանին
(հասցե՝ ք. Երևան Դավթաշեն 1-ին թաղ., 15շ., 14 բն)
ՀՎՀՀ՝ 00146096, էլ. հասցե transitprotender@yandex.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Ասատրյան,

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Տրանզիտ պրո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 05.05.2025 թվականին կնքվել է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՏՆՏ-1-5 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագրի), համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է ապրանքների մատակարարման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Հիմք ընդունելով 24. 06. 2025 թ.-ի՝ Ձեր կողմից ուղարկված գրությունը առ այն, որ **հրաժարվում եք** 21-րդ չափաբաժնի՝ բակի ցինկապատ աղբամանների մատակարարումից, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը միակողմանի մասնակի լուծում է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՏՆՏ-1-5 ծածկագրով պայմանագիրը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում ենք՝ պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում **պայմանագրի կատարման ապահովման** գումարը կազմում է **1400** (հազար չորս հարյուր) ՀՀ դրամ և **որակավորման ապահովման գումարը** կազմում է **2100** (երկու հազար հարյուր) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900018001876» հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, եթե սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ձեր կողմից վճարվեն և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացվեն ՀՊՏՀ-ի գնումների բաժին, ապա «Տրանզիտ պրո» ՍՊԸ-ն չի ներառվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ռեկտոր՝ **Ա. Գրիգորյան**

Կատարող՝ գնումների համակարգող՝
Նորայր Վարդանյան
Հեռ.՝ 010-593-483